ջինը, որ Քրիստոսի Աստուածութիւնը ճանաչեց և նորա սուրբ Աւետարանի փրկարար վարդապետութիւնը գրկեց, որով և արդարև քրիստոնեական երանութիւնն ես առաւ. զոր չ'տեսած հաւատաց. մինչ դեռ ուրիշ ազգերը խորին կռապաշտութեան մէջ ընդարմացած կ'խորդային, և մեր անդրանիկ և նախնծայ արքայէն յորդորանաց և դարձի ձայներ կ'լսէին, իբրև թէ արեգական լոյսը ծագած, նոքա գիշերուան մէջ քնանային.

Շարունակելի

ՊԱՏՄԱԿԱՆ

Արարատոյ մեծ և առաջին պարտքը լինելով հայրենասիրաց փափագը գոհ առնելու համար Հայաստանի աշխարհքին վրայ ընդհանրապէս տեղեկութիւն տալ, նորա պատմաբանական մասերուն ստորագրութիւնը կ'անենք, որպիսի Արարատեան նահանգն է հայոց թագաւորաց բնատուր կայանք, նորա գաւառացը, լերանց և գետոց, օդոց և բերոց. որպէս զի նոցա մէջ նախնեաց հնութեանց՝ քաղաքաց տաճարաց և վանօրէից ստորագրութիւնները կարդալու ժամանակ՝ նոցա վրայ լոյս առնելուն տեղ՝ յառաջները մթութ չըլնէ.

Այս գաւառաց մէջ, որոց առաջինքն են Հայաստան երկրի դաշտն արարատեան առպնջական հինաւուրց և ազատն Մասեաց որու ստորոտէն բազում առ բազում ընկեցալ կ'շրջապատեն զդաշտն ծաղկաւէտ և աղբիւրահոս լերինք, Արագածոտն գաւառ և Շիրակ, սոցա մէջ անթիւ և անհամար կեցած են կործան և կիսակործան աստուածաշէն և շքեղազարդ վանքեր. ուր թագաւորական Անին մայրաքաղաք քերովբաքանդակ աշտարակներով և նկարազարդ պալատով ի վեմս արաստոյս և յորձաքարս աղխաղխեալ շուշանաբեր հովտաց մէջ, կանաչազեղ և զուարթածաղիկ դաշտերի երեսը՝ եդեմաբուղխ արծաթափայլ գետերով պատած, քաղցրաշունչ և առողջարար օդոց շնչելով, արգաւանդաբեր և պարարտարօտ պարտէզներու ծաղկանց հետ կ'ծիծաղի. ուր հիւսիսը կ'գայ, ուր հարաւ կ'հնչէ, այո այս երկրային դրախտը քառաջ և քառավազ գետերու և աղբիւրներու մէջէն եդեմական դրախտին տեսքը կ'բերէ տեսողաց աչքին, որոց մէջ նախամարդոյն հայ սերունդը կ'բնակէ ի գործել և ի պահել.

Հայաստանի այս ամէն աշխարհագրական դրից վրայ՝ որ ժամանակ ժամանակ ազգային գրիչներ պակաս եղած չեն ոմանք լեռներու, ոմանք գետոց և այլք քաղաքաց կամ վանօրէից ստորագրութ տալով իրենց գրուածոցը մէջ, ի սոցանէ ոմանք Եղիշէ սուրբ վարդապետի ասածին ալ.

միայն "ի կարծ ընդոստուցեալ և ի-
լուր զարթուցեալ, և ոչ անձամբ ի տեղ
ուրջն պատահեալ, ուրիշներէ առնելով
ու գրելով, մեր Հայրենի հնութեանց
իրական պատմութիւնը գրելու փոխա-
նակ, անհարազատ տեղեկութիւններով
լցեր են, զորս Հայաստան անձամբ չտես-
նողները կարդալով, այն ամէն բերանա-
ցի լսածները իբրև աղբիւր իսկութեանց
կ'համարին, և կ'տարակուսին ազգային
նախնի մատենագրաց հաւաստի գրուա-
ծոց վրա. մենք Ս. Բարատեան նահանգի լե
բանց, գետոց և գաւառաց ստուգագրու-
թեանց մէջ արդի հեղինակաց տարաձայն
գրուածքը ծանօթութեամբ կ'նշանակենք
ապագայի համար.

ԱՐԱՐԱՏ ՆԱՀԱՆԳ

Մեր Հայրենի աշխարհքի անունը Ուրբ
գրքէն գիտենք սկիզբը տրուած՝ Ս. Բարատ
ինչպէս կը կարդանք Նորա մէջ. "Լու հան
գեաւ տապանն... ի վերայ լերանց Ս. Բա-
ռատայ, Ծնն. ը. 4.
Ուրիշ ազգաց յառաջ բերած զանազա-
նութիւնները մեր աշխարհքը Ուրբ գրը
քէն այսպէս կոչուելուն համար՝ մեզ հարկ
է այս տեղս յիշել. ըստորում այս ա-
նուանակոչուելն համար մենք աւելի զօրեղ
փաստ ունինք Լ. Օթանանից թարգմանու-
թիւնը, (յորմէ մեր Ս. ստուածաշունչն է)
որ Ադրամելեքայ և Սանասարայ փախուս-
տը՝ դէպ ի Հայաստան կ'ը գնէ Լ. սայեայ
մէջ ԺԷ. յ8." Գնացին փախստական ի հայս,
երբ եբրայական և լատինացուցը կ'գրեն
"փախստական յերկիրն Ս. բարատայ" որով
ստոյգ կ'հաստատուի թէ Ս. բարատը՝ Հա-
յաստանն է." Հայրենատուր վիճակեալ
աշխարհ մեր, ըստ խորենացւոյն,
Սակայն ուրիշ ազգաց մատենագիրք մեր
ազգի պատմութեան վրա հմտութիւն չու-
նելով, այս նահանգական անունը՝ բուն
իսկ Մասիս լերին անունը համարեցին իս-
կզբանէ մինչև ցայսօր. բայց Ս. բարատ ա-
նունը դաշտավայրին անունն է, որով կո
չուած է և նահանգը. որ Ս. բայէն մնաց. 1
ուր և մեր առաջին նահապետաց բնակա-
բանը լինելով և եղբը թագաւորաց, նոյն
երկիրը այս անունով նահանգ հաստատուե
ցաւ. որոյ համաձայն և խորենացին Մով
սէս բոլոր Հայաստանը այս գլխաւոր նա-
հանգի անունովը կը կոչէ մանաւանդ որ
նա ինքը Ս. բարատ կանուանէ մեր աշխարհ
քը, և ոչ Ս. բամայ անունովը Ս. բմենեա.
2. ինչպէս օտար ազգերը.

Հարունակելի

1. Արարատ անունը՝ Յովհ. Կաթուղիկոս պատմութեան Արրայի անունէն կ'համարի առնուած "Իսկ Արրայի զշինութիւն աշխարհիս անորինեալ, յիւր անուն զընակութեան իւրոյ վայրս կոչէր Արարատ, ... ուստի և ոմանք Արարատ կ գրեն, խորենացին ևս այստեղ կ'ակնարկէ Արրայի գեղջ ալաս աւորութիւնը. ըստ այսմ Ս. Ալատը՝ կ'ստուգաբանուի Աստի արատ.
2. Ուրիշ ազգերը մեր Արամ նահապետի քաջութեանցը ծանօթ լինելով, Հայաստանը Արմենիա կը կոչեն. զոր արար 'ընդ ջրս ղորտս երկրի, ինչպէս կ'վկայէ Յովհ. Կաթ. պատմութիւնը.